ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 48 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի N 332-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության կողմից ձեռք բերված ներքոհիշյալ ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2022 թվականի մայիսի 17-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը» ծրագրի մասին» N 332-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) արհեստական խոտածածկ՝ 29 տեղ, 21,760 կգ ընդհանուր քաշով, 66,313.80 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,325,250 դրամ, Երևանի մաքսային սպասարկման կենտրոն-մաքսատուն, վարչություն.

2) արհեստական խոտածածկի տեղադրման պարագաներ՝ 2 տեղ, 1,380 կգ ընդհանուր քաշով, 5,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման

ծախսերը կազմել են 985,320 դրամ, Երևանի մաքսային սպասարկման կենտրոն-մաքսատուն, վարչություն.

3) կաուչուկի գնդիկներ՝ 38 տեղ, 38,400 կգ ընդհանուր քաշով, 7,030 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,680,000 դրամ, Երևանի մաքսային սպասարկման կենտրոն-մաքսատուն, վարչություն.

4) կաուչուկի գնդիկներ՝ 55 տեղ, 55,600 կգ ընդհանուր քաշով, 10,175 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 9,994,950 դրամ, Երևանի մաքսային սպասարկման կենտրոն-մաքսատուն, վարչություն.

5) տեսաօգնության համակարգի սարքավորումներ՝ մեկ տեղ, 120 կգ ընդհանուր քաշով, 30,479 բրիտանական ֆունտ ստերլինգին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, Արևմտյան մաքսատուն-վարչություն):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

18.01.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ